Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
սեպտեմբերի 6-ի N 1147 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՄԱՏՅԱՆԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանից (այսուհետ՝ գրանցամատյան) տեղեկատվության տրամադրման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Գրանցամատյանի օրինակելի ձևերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանով:

3. Գրանցամատյանը կազմված է երկու միասնական մատյանից՝

1) երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյան.

2) հանքարդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյան:

4. Գրանցամատյանից տեղեկատվությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

5. Գրանցամատյանում առկա տեղեկատվությունից կարող է օգտվել յուրաքանչյուր անձ՝ գրավոր դիմելով լիազոր մարմին:

6. Դիմումում պետք է նշվի մատյանում հաշվառված ընդերքօգտագործման իրավունքին առնչվող, ինչպես նաև իրավունքի փոփոխության, փոխանցման, գրավի, զգուշացման և դադարեցման մասին պահանջվող տեղեկատվությունը:

7. Լիազոր մարմնի անունից համապատասխան գործակալությունը գրանցամատյանից տեղեկատվությունը տրամադրում է մեկօրյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

12_1147